ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/4.1-3-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. մայիսի 31-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) առցանց նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Ա.Սողբաթյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Պետրոսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 1 (մեկ) հայտ՝

- «Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն» ՀԿ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված միակ կազմակերպության՝ «Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն» ՀԿ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում մրցույթի հրավերի 2.4. և 2.4.1 կետերի պահանջներին:

Մասնավորապես՝

- ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի 2.3 կետի 2-րդ ենթակետի (ունեն կամ վարձակալության հիմունքով առկա է համապատասխան տարածք՝ շինության առաջին հարկում, առանձնացված մուտքով, կահավորում, սարքավորումներ և գույք) պահանջներին,
- ներկայացված ծրագրում պահպանված չեն 2.4.1 կետի պահանջները, օրինակ՝ ներկայացված չէ տեղեկատվական կենտրոնի կենտրոնական մուտքի մոտ «Այցելություն տեղեկատվական կենտրոն» տեղեկատվությամբ՝ «i» տարբերանշանի և առնվազն 1՝ դեպի ինֆոկենտրոն ուղղորդող ցուցանակի, «i» տարբերանշանի առկայության դեպքում՝ 2 ուղղորդող ցուցանակի, տեղեկատվական կենտրոնի տարածքում այցելուների համար անվճար հեռախոսակապի և ինտերնետ կապի (wifi հասանելիություն), տարածաշրջանի զբոսաշրջային խթանմանը միտված սոցիալական էջերի բովանդակության պարբերական թարմացման (շաբաթական առնվազն 1 հրապարակում) և մի շարք այլ գործառույթների ապահովմանն ուղղված աշխատանքների նկարագրությունը:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած միակ կազմակերպության՝ «Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն» ՀԿ-ի կողմից ներկայացված հայտը:
2. Ծրագրի հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթը լուծարել:
3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան -

Ա.Մկրտչյան -

Ս.Ասլիզադյան -

Ս.Հովհաննիսյան -

Ա.Սողբաթյան -

Հ.Սահակյան -

Լ.Պետրոսյան -

Շ.Հովսեփյան - 17.06.24թ